ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 Կոդ 04704111 Հասցե Արմավիրի մարզ գյուղ Արտիմետ Հեռ. 4 - 76 - 01

N 20

_03 ապրիլի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2013 թվականի մարտ ամսին ընդունվել է համայնքի ղեկավարի մեկ որոշում և արձակվել է մեկ կարգադրություն :

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. Միրզախանյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ... 3244-13 03 04 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N -----1-------

«---15-----» մարտի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի մարտի 15-ից թույլատրել վերսկսել համայնքի <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքները:
2. Մանկապարտեզի վարիչ Տաթևիկ Միրզախանյանին՝ համալրել մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2013 թվական
մարտի 15
գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----3-------

«---20-----» մարտի 2013 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի, Արտիմետ գյուղի բնակիչ Արայիկ Բաբախանյանը դիմել է, Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 6-րդ փողոց 20 հասցեում գտնվող, ըստ 20.03.2013թ. ա/մ 1125 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող օրինական 0.0982հա հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շենք - շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001 թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 6-րդ փողոցի 20 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արայիկ Բաբախանյանի (ծնված 16.05.1980թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.098 հա հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունների նկատմամբ: Բնակելի նշանակության օժանդակ շենք – շինությունները

բավարարում են << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Արայիկ Բաբախանյանի (ծնված 16.05.1980թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-րն կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ , տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. 0012 – 0011 ծածկագրին տալ 6-րդ փողոց 20 հասցե:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ջ. Միրզախանյան